

ՀՍՍՌԻ ՀՈՂԺՈՂԿՈՄԱՏ  
ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱԿԱՆ ԱՆԱՍՆԱՊԱՀԱԿԱՆ ՓՈՐՁԱԿԱՅԱՆ

---

ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԿՈՆՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

ԳՐԲՈՒՅԿ № 1


Վ. ՔՅՈՒՐՔՅԱՆ

ՊԱՆՐԻ ՀԵՂՈՒԿ ՄԱԿԱՐԴ  
ՊԱՏՐԱՍՏԵԼՆ ՈՒ ՕԳՏԱԳՈՐԾԵԼԸ

(Հաստատված է ՀՍՍՌԻ Հողթողկոմատի կողմից)

---

Ե Ր Ե Վ Ա Ն — 1942



ՀՍՍՌ ՀՈՂԺՈՂԿՈՄԱՏ  
ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱԿԱՆ ԱՆԱՍՆԱՊԱՀԱԿԱՆ ՓՈՐՁԱԿԱՅԱՆ

---

ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԿՈՒՆՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

ԳՐԹՈՒՅԿ № 1

637.3

Բ-70

Վ. ՔՅՈՒՐԲՉՅԱՆ ՄՏՈՒԳՎԱՄ Է 1961 թ.

ՊԱՆՐԻ ՀԵՂՈՒԿ ՄԱԿԱՐԴ  
ՊԱՏՐԱՍՏԵԼՆ ՈՒ ՕԳՏԱԳՈՐԾԵԼԸ

(Հաստատված է ՀՍՍՌ Հողժողկոմատի կողմից)

1714

1953

---

ԵՐԵՎԱՆ—1942

Պատասխանատու խմբագիր՝ Ա. ԲԱՂԴԱՍՏՐՅԱՆ

---

ՎՑ 2804, պատվ. 475, տիրաժ 500, ստորագրված  
է տպագրութեան 24/VI 1942 թ.

---

Թերթերի և ամսագրերի տպարան, Երևան

## ՀԵՂՈՒԿ ՄԱԿԱՐԴ ՊԱՏՐԱՍՏԵԼՆ ՈՒ ՕԳՏԱԳՈՐԾԵԼԸ ՊԱՆՐԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Լավ որակի մակարդ յուրաքանչյուր կոլտնտեսություն ինքը կարող է հեշտությամբ պատրաստել: Դյու համար անհրաժեշտ է միայն շրջանների պաշար ունենալ: Շրջան միերեկիս պետք է ղեկավարվել Հայկական ՍՍՌ-ի Հողօրդկոմատի հաստատած հրահանգով, որից ունեն բոլոր կոլխոզները:

Մակարդի լավորակությունը գլխավորապես կախված է շրջանների որակից և պատրաստելու տեխնիկայից ու պայմաններից:

Բարձր որակի շրջանները ծավալով փոքր են լինում, բաց-ղեղնազույն, մկանային հյուսվածքը թույլ է դարդացած, նեխական հոտ, ճարպային կուտակումներ ու բծեր չունեն, բորբոսմած չեն և, վերջապես, չոչափելիս փափուկ են լինում:

Նորմալ չորացման պայմաններում այդպիսի շրջաններ ստացվում են կաթով կերակրվելու շրջանում (ծծկեր) մորթած հորթերից, դոմշաձագերից, գառներից և ուլերից: Այդպիսի շրջաններից ստացվող մակարդը թունդ է լինում և բարձր որակի, քանի որ այդ հասակում նրանց մեջ շատ ֆերմենտ է պարունակվում և այդ առաջել չափով համապատասխանում է պանրագործության պահանջներին:

Ավելի մեծերի և մանափանդ կատարելապես մեծացած կենդանիների շրջաններից ստացված մակարդի զորությունն ավելի թույլ է և որակը ավելի ցածր:

Բացի դրանից, ֆերմենտի որակն ու պարունակությունը փոփոխվում է նաև կենդանու տեսակի համապատասխան: Օրինակ, մեծահասակ կենդանիներից խոզերի ստամոքսը, համեմատած շրջանների հետ, ավելի շատ ֆերմենտ է պարունակում:

Եթե շրջանները զործածվեն լավ չորացրած վի-

ճակում և աննվազն երեք ամիս պահելուց հետո, ապա թրմաջրում լորձը պակաս կլինի և մակարըն ազլելի հեշտ կբամվի:

### ՇՐԴԱՆՆԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

Յուրաքանչյուր անդամ մակարդ պատրաստելուց առաջ աշնքան շրդան ևն վերցնում, որ նրանցից պատրաստված մակարդը շափական լինի ոչ ալելի, քան 5—7 օրվա համար: Շրդանների յուրաքանչյուր աշղպիսի խումբը կազմում ևն աշղպիսի հաշվով, որ աշղ խումբն իր որակով համարաստասխանի շրդանների ամբողջ պաշարին:

Այդ ձևով կաղմված շրդանախմբից ստացված մակարըն իր թնդությամբ ու որակով միատեսակ է լինում:

Թրմաջուրը (այսինքն՝ շրդանները երկար թրջելուց հետո ստացվող հեղուկը) պատրաստելուց առաջ շրդանի կամ նրա լորձաթաղանթի վրայից ճարպային կուտակումներ, միանային հյուսվածքի (մսի) մնացորդները հեռացնում ևն, երկու անձկացող (շեղացող) ծայրերը կտրում ու կեղտասություններից սրբշում ևն: Իսցի դրանից, մեծահասակ կենդանիների շրդանները մաքուր սառը ջրում ողողում ևն: Հեռացման ենթակա նշված մասերը Ֆերմենտ համարյա չեն սրարունակում և բացի դրանից, հարուստ ևն լինում միկրոբներով, որից մակարդը փչանում է:

Այդ եղանակով պատրաստած շրդանները ջրով կամ շիճուկով թրջում ևն, տրորում, 2—10 գր. ազով քեչ աղում և վերջապես երջլիկի ձևով կորոլում ու կապում: Այդ վիճակում շրդանները դնում ևն մի սղմանի մեջ և 1—2 օր պահում տաք (30—40° Ց) ու մութ տեղում՝ մինչև փափկելը:

Եթե շիճուկով ևն թրմում, ապա շատ լավ է կորելիկա շրդաններին քեչ մածուն քսել:

Կաթ մակարդող Ֆերմենտար շրդաններից գուրուբերելու համար, որպես թրմող հեղուկ, նայած կոնկրետ սրայմաններին, կարելի է գործադրել՝ շիճուկ, աղաթթվով թթվեցրած ջուր կամ աղաջուր և, վերջապես, աղաջուր՝ հետապայում շիճուկ ալեկացնելով նրա վրա:

## ՇՐԳԱՆՆԵՐ ԹՐՄԵԼՈՒ ՀԵՂՈՒԿ

Շրգաններ թրմելու համար կոլանտեսական կամ դյուդացիական արտադրության պայմաններում ամենից լավ է գործադրել սերզատամ, շիճուկային սպիտակուցից (լոսից) անջատած շիճուկ, որն ստացվում է ոչխարի կաթի վերամշակումից հետո:

Դրա համար պանրից հետո մնացած թարմ շիճուկը սերզատում են կամ, եթե սերզատելը հնարավոր չի լինում, ուղղակի տաքացնում են կաթնայում մինչև եռացման աստիճանի և դրանից ստացված շիճուկային սպիտակուցը հեռացնում են դատարկելով այն և որևէ գործվածքից (կտորեղենից) քամելով: Եթե շիճուկային սպիտակուցը (լոսը) լիովին չի մախարգվել, ապա շիճուկի տաքացման վերջում ավելացնում են նրա վրա թթու շիճուկ՝ մինչև պարզվելը:

Եթե մախարգը պատրաստում են մեծահասակ կենդանիների շրգաններից, ապա հանձնարարում ենք վերջնել խնոցու թանից ստացված թթու շիճուկը՝ սպիտակուցները նրա միջից տաքացման միջոցով անջատելուց հետո: Դրա համար ավելի լավ է գործադրել ոչխարի մածնից կարպե հարելուց կամ լավորակ թթու սերը հարելուց ստացվող թանի շիճուկը: Այս դեպքում ֆերմենտն ավելի լավ է դուրս դալիս և մախարգը չի աղտակալում:

Թրմելու համար կարելի է գործադրել եռացրած և աղաթթվով թթվեցրած ջուր՝ մի լիտր ջրին 15 գր. թունդ (ծխացող) աղաթթու ավելացնելով:

Թրմել կարելի է նաև բորաթթու խառնած աղաջրում՝ մի լիտր ջրին 50 գր. կերակրի աղ և 40 գր. մաքուր բորաթթու գնելով:

Լավ մախարգ է ստացվում ծծկեր հորթերի և դառների շրգանները թրմելով 5% աղաջրում, որի վրա 6—12 ժամ հետո ավելացնում են շիճուկային սպիտակուցից անջատած շիճուկ՝ պահանջվող չափով: Այս դեպքում շիճուկը ցանկալի է գործադրել ուսցի (ձեռտոնի) թունդ թրմոցի հետ խառնած:

Շրգաններ թրմելու համար շիճուկ գործադրելիս միշտ օդտակար է նրա վրա ուրցի մուգ ավելացնել 5—10%-ի չափով, որը նեխումից պաշտպանում է:

## ՄՐԱԿԱՐԴԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

Շրջանների որակի և գլխավորապես նրանց հասակի համապատասխան սահմանելում է թրմելու համար անհրաժեշտ հեղուկի քանակությունը: Ծծկեր հորթերի, դառների և այլ կաթնատուների նկատմամբ 100 գրամ չրդանի գլխաց վերցնում են 1 լիտր հեղուկ, իսկ մեծահասակ կենդանիների 100 գրամ չրդանի գլխաց վերցնում են 400—500 գրամ հեղուկ, այսինքն՝  $2-2\frac{1}{2}$  անգամ պակաս:

Այսպիսով, մոտավորապես մշտական զորություն (թնդություն) ունեցող մակարդ պատրաստելու համար, նախած չրդանների հատակին և նախած թե նըրանք կենդանիների ինչ առանձին տեսակների են պատկանում՝ թրմելու համար պահանջվող հեղուկի քանակությունը փոփոխվում է:

Մակարդը պատրաստում են կավե ողորկած կրճուճներում և մինչև լիովին պատրաստվելը (հասունանալը) պահում են մոտ  $30^{\circ}$  տաք տեղում:

Մակարդը պատրաստում են հետևյալ կարգով՝ սկզբից կճուճի մեջ են դնում մանր կտրած չրդանը, այնուհետև նրա վրա լցնում են մոտ  $35-40^{\circ}$  տաքացրած հեղուկը: Կճուճի կամ կուժի բերանը կապելուց հետո, այն դնում են օջախի մոտ և վրան ծածկում: Առաջին 2—3 օրը կճուճի պարունակությունը խառնում են օրական 4—5 անգամ:

Եթե պրոցեսը նորմալ է ընթանում, ապա չրդանը երես չպիտի բարձրանա, իսկ եթե բարձրանում է, այդ նշանակում է, որ դաշ արտադրող միկրոբներ են զարգացել և շիճուկը լավ չի թթվում: Այդպիսի մակարդը գործադրելիս պանիրը կարող է փքվել (ուռչել):

Մեծահասակ կենդանիների չրդանից պատրաստած թրմաջուրը գործածելուց առաջ պահում են 5—8 օր, իսկ մատղաշների չրդանից պատրաստվածը՝ 3—5 օր: Մակարդը պատրաստելուց հետո հովացնում են այն և հով տեղում պահում մինչև սպառվելը:

Թրմաջուրը հանձնարարում ենք օգտագործել 7 օրից ոչ ավելի, քանի որ ժամանակի ընթացքում հեղուկ մակարդը թուլանում է և, բացի դրանից, կոնսերվացնող նյութերի բացակայության պատճառով մակարդը կարող է փչանալ՝ նեխման հետևանքով:

Պահանջվող քանակութեամբ թրմաջուրը զործածութեանից առաջ ամեն անգամ քամում են: Որպես մակարդ զործածում են քամված հեղուկը, իսկ քամիչի վրա մնացած նստվածքն ու չրզանի կտորները դեն են դրում:

Լավ որակի մակարդը թափանցիկ է լինելու, բաց դույնի, անախորժ հոտ չպիտի ունենա և դիմացկուն պիտի լինի:

Երկարակյաց հեղուկ մակարդը սրատրաստում են հեռեկայ եղանակով՝ նախապատրաստումը, կտրատումը, ինչպես նաև չրզանների և թրմող հեղուկի կշռաչին հարաբերութեանները մնում են նույնը, ինչ վերև նկարագրեցինք:

Ծծկեր կենդանիների չրզանները թրմելու համար 100 գր չրզանի դիմաց վերցնում են 1 լիտր ջուր, 50 գր կերակրի աղ և 40 գր բորաթթու, ամանը լավ թափահարում են և այդ խառնուրդը թողնում սենյակի սովորական ջերմութեան պայմաններում և ամեն օր մի քանի անգամ թափահարում են, որ լավ թրմի:

5—8 օր անցնելուց հետո նորից աղ են ավելացնում աչքքան, որքան սկզբում էր դրված և հիմնովին խառնում են, որ աղը լուծվի: Լրացուցիչ աղ ավելացնելու և հեղուկը թույլ աղաթթվով քիչ թթվեցնելու հետևանքով լորձը հեղուկից անջատվում է սպիտակուլցային նստվածքի ձևով: Դրանից հետո հեղուկը կարելի է քամել բամբակե կամ թղթե քամիչից: Հեղուկը դանդաղ է քամվում՝ մի թղթե քամիչը 2 օրում քամում է 1 լիտր թուրմ, որը և մակարդն է հանդիսանում: Գործածված 1 լիտր ջրից ստացվում է մոտ 800 խս մ. քամված հեղուկ:

Եթե մակարդը թունդ է ստացվում, ապա աչք նոսրացնում են, ավելացնելով նրա վրա բորաթթվով հաղեցրած 10%-անի աղաջուր: Ստացված հեղուկը լցնում են շշերի մեջ, խցանում և հով տեղում պահում:

Մինչև մշտական աղդեցութեան ձևոք բերելը, առաջին երկու ամիսը մակարդը կարող է կորցնել իր ակտիվութեան (զորութեան) 25—30%-ը: Նշված եղանակով պատրաստած մակարդի զորութեանն ստացվում է մոտափոքրապես 1:16—18 հազարի, իսկ մշտա-

կան արդեցություն ձևք բերելուց հետո իջնում է 1:10-12 հազարի, եթե ծծկեր կենդանիները լափորակ չբլաններ են դործարված եղել:

ԱԿԱՐԳԻ ՍՏՈՒԳՈՒՄԸ ԵՎ ԿԱԹԻ ՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՀԱՆՁՎՈՂ ՄԱԿԱՐԳԻ ՔԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ

Մակարդի գորությունը կամ ուժը որոշու համար մակարդման ենթակա կաթի կաթնալից վերցնում են 100 գր կաթ և լցնում են մինչև կաթի ջերմաստիճանին տաքացրած շերտի մեջ և վրան 10 գր մակարդ են ավելացնում: Եթե չափելու հատուկ ամաններ չլինեն, կարելի է օգտվել սեղանի պալավ՝ 10 գրալ կաթ և մեկ գրալ մակարդ վերցնելով:

Մակարդը կաթին խառնելուց հետո թողնում են հանդիսա և ժամացույցով հետևում են, թե երբ թանձրուկը հանդես կգա:

Մակարդման մոմենտը չվախցնելու համար անհրաժեշտ է կաթը հաճախակի գզալով բարձրացնել և հենց որ թանձրուկը երևա՝ նշել մամանուկը: Մինչև թանձրուկի երևալն անցած վաչրկյանների թիվը — մակարդի գորության ցուցանիշը կլինի: Օրինակ, եթե կաթը մակարդվել է 50 վաչրկյանում, ապա մակարդի գորությունը կաթի տվյալ ջերմության պայմաններում 50 վաչրկյան կլինի:

Գիտենալով մեր մակարդի գորությունը, որոշում ենք, թե որքան պետք է մակարդ վերցնել, որ 200 կգ կաթը 30 բույեյում մակարդվի:

Դրա համար վաչրկյաններով արտահայտված մակարդի գորությունը պետք է բազմապատկել կաթի կիրառմանների թվով և ստացված թվը բաժանել մեր վերցրած օրինակում 18-ի, եթե պահանջվում է կաթը մակարդել 30 բույեյում: Եթե պետք է լինում մակարդել 60 բույեյում, ապա բաժանում են 36-ի, եթե 50 բույեյում՝ 30-ի և եթե 40 բույեյում՝ բաժանում են 24-ի:

Այդպես, մեր բերած օրինակում մակարդի գորությունը 50 վաչրկյան է: 200 կգ կաթը պահանջվում է մակարդել 30 բույեյում, ապա ստե՞նք, վերև բերված կանոնի համաձայն, պետք է՝

$$\frac{50 \times 200}{18} = \frac{10000}{18} = 555^3 \text{ սմ մակարդ}$$

1953  
284

ՀԱՅԿԵՆ

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0007901

ՀԻՆՔ 50 ԿՈՊ.

268

A  $\frac{11}{19353}$

НАРКОМЗЕМ АРМ. ССР  
Республиканская Опытная Станция  
Животноводства

---

В. КЮРКЧЯН

Приготовление жидкой закваски и ее  
использование в сыроделии

(На армянском языке)

Ереван—1942